

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/2

14 օգոստոսի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանի 24.07.2014 թ-ի դիմում-բողոքը 2012 թվականի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանի դիմում-բողոքում բերված փաստարկները.

Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանի գործունեության տեսակը առևտուրն է, որն իր և իր ընտանիքի անդամների միակ բիզնեսն է: Այլ գործունեությամբ չի զբաղվում: Ժամանակին ներկայացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հաշվետվությունները և վճարում հարկերը:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի թ) ենթակետի երկրորդ պարբերության համաձայն 2012 թվականի հունվարի 13-ին էլեկտրոնային եղանակով ներկայացրել է ՀՀ կառավարության 1104-Ն որոշմամբ հաստատված՝ որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն:

2014 թվականի ապրիլ ամսին՝ 2 տարի անց, Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը Շենգավիթի հարկային տեսչությունից ստացել է ծանուցում իր կողմից ներկայացրած դիմումի ձևը հիմնավորելու պահանջով: Ըստ բանավոր տեղեկացման, Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը պետք է ներկայացներ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի 51-Ն հրամանով հաստատված հայտարարությունը:

Ըստ բողոքի, «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տարբեր դեպքերի համար հայտարարության տարբեր ձևեր նախատեսված չեն և 2012 թվականի հունվարի 13-ին՝ դիմումը ներկայացնելու պահին, այլ դիմումի ձև էլեկտրոնային համակարգում չի եղել:

Հիմք ընդունելով վերը նշվածը Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը կարծում է, որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի և նշված որոշման դրույթներում առկա է հակասություն: Միևնույն ժամանակ կարծում է, որ նման խնդիրների և տարրնթերցումների դեպքում ճիշտ կլիներ որպեսզի հարկատուն ժամանակին իրազեկվեր՝ իր բիզնեսին վնաս հասցնելու փաստի առաջ չկանգնեցնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը խնդրում է ստեղծված իրավիճակը լուծել իր օգտին, քանի որ հակառակ դեպքում լրացուցիչ հարկային բեռը ծանր հետևանքներ կունենա իր բիզնեսի համար:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2012 թվականի հունվարի 13-ին Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը էլեկտրոնային եղանակով ներկայացրել է ՀՀ կառավարության 1104-Ն որոշմամբ հաստատված որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառվելու և հաշվառման համար կիրառելու մասին հայտարարություն: Նշված հայտարարության ներկայացմամբ Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանն իրեն համարել է ԱԱՀ վճարող և կատարել դրանից բխող գործողություններ, ինչը, սակայն, չի ընդունվել Շենգավիթի ՀՏ կողմից, քանի որ ԱԱՀ վճարող համարվելու համար հիշատակված հայտարարության փոխարեն պետք է ներկայացվեր ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի 51-Ն հրամանով հաստատված ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովը բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի

առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմինն ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Մինևույն ժամանակ, Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման արդյունքում կազմված թիվ 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:


Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանը ցուցաբերել է բարեխիղճ հարկատուի վարքագիծ, Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ա/Ձ Արտաշ Գաբրիելյանի 24.07.2014 թ-ի դիմում-բողոքը՝ 2012 թվականի ընթացքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ